

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՆԻԹԵՐ ՀԱՅ-ՈՒՆԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ*)

Բ.

2. Մասթէոս Յովանիսեցու յիշատակարանը:

Երբ Հ. Պօղոս Պիրօմալ Նախիջևանի գաւառում մեծ խռովութիւնների տեղիք տալուց յետոյ 1664 թուին հարկադրւում է իւր պաշտօնը թողնել, եկեղեցական և աշխարհական ժողովը առաջադրում է նրա փոխարէն Հ. Մատթէոս Յովանիսեցու (Avanicensis) թեկնածութիւնը: Հաստատութեան գործը գլուխ բերելու ու արքեպիսկոպոսական աստիճան ստանալու համար Հ. Մատթէոս պէտք է մեկնէր Հռոմ: Հայոց համայնքների ի վերուստ յաճախակի արհամարուած ընտրական իրաւունքները վերականգնելու և պաշտպանելու նպատակով, Վատիկանի դիւանատնից Հ. Մատթէոս 1666 թուի ապրիլին հանել է տալիս Պօղոս Գ. պապի հայերին «յաղազս արհեպիսկոպոսաց հայոց» ուղղած այն կոնդակը, որի օրինակը պահուած է մեր ձեռագրի մէջ: Սոյն կոնդակի վրայ հիմնուած, սրբազան ժողովը կայացած ընտրութիւնը համարում է վաւերական և 1668 թուի մայիսի 14-ին Հ. Մատթէոս Նախիջևանի գաւառի արքեպիսկոպոսութեան պաշտօնն ու կոչումն է ստանում**): Նախ քան իւր վերադարձը Հ. Մատթէոս կաթողիկ աշխարհի քաղաքական շրջաններում ևս սկսում է միջնորդութիւններ յարուցանել ի նպաստ հայ կաթողիկ համայնքների. նրա այդ միջնորդութիւնների նպատակն էր՝ եւրոպական ազդեցութեան միջոցով թեթևացնել հարկերի ու պարտքերի այն ծանրութիւնը, որի տակ հիւժոււմ էին կաթողիկ հայերը և վերականգնել այն մի քանի վաղեմի արտօնութիւնները, որ վայելում էին նրանք պարսից պետութեան սահմաններում:

*) Տես «Արարատ», 1914. ղեկտեմբեր:

**) Բ. Պատկանեան, ibid, pp. 24—25. Ալիշան, ibid, p. 398.

«Ոչ միայն հաւատացեալների դաշտերն ու խաղողի այգիները, այլ և վանքերի ու եկեղեցիների սրբազան անօթներն էին զբաւ դրւում հերձուածողների կամ անհաւատների մօտ: Նոյնիսկ կրօնաւոր հայրերն էին հարկադրուած լինում ուրիշ բանուորների հետ հաւասար վարձով (*pro pari mercede cum aliis operariis*) աշխատել դաշտերում ու այգիներում, որպէս զի ստիպուած չը լինեն նաև իրանց եկեղեցական պաշտօնը թողնել, կամ՝ կեանքը կորցնել»*) Սյսպէս է նկարագրում իրերի դրութիւնը ժամանակի հայ միսիոնարներից մէկը՝ Հ. Պետրոս Բեգիկ: Նախիջևանի դաւառահայրերը, ինչպէս արդէն Հ. Յակոբ Յիսուսի օրինակից գիտենք, աշխատում էին բարւոքել եկեղեցու և նրա սպասաւորների այս վիճակը նաև ժողովարարութիւնների միջոցով. կաթոլիկ եւրոպայում և նրա դադութներում այդ ուղղութեամբ նրանք ունենում էին երբեմն յաջողութիւն**): Սակայն չարիքի դէմ կռուելու համար կաթոլիկ հայրերը դիմում էին նաև աւելի արմատական մեջոցների: Յարգելով Հռոմի միջնորդութիւնը, արդէն իսկ ԺԶ. դարում շահ Իսմայէլ Ա. Նախիջևանի կաթոլիկ գիւղերին մի շարք արտօնութիւններ է տալիս. այդ գիւղերը նոյնիսկ տաճեկան տուրքից (*contributio annua*) են ազատ յայտարարւում: Բայց յաջորդ շահի օրօք կառավարութեան դէպի կաթոլիկ համայնքները ունեցած բարեհաճ տրամադրութիւնը փոխւում է հիմնովին. պետական հարկերի իրաւունքը (*jus regium tributorum*) նորից է տարածւում Նախիջևանի գաւառի վրայ և նոյնիսկ յետագարձ ոյժ ստանում՝ կարգադրւում է ժողովել նաև այն հարկերը, որոնցից Նախիջևանի համայնքները ազատ էին կացուցուել նախորդ շահի տուած արտօնութեան համաձայն***): Կեանքի և գոյքի ապահովութիւնից չզրկուած, պարտքերի ու հարկերի ճնշումից նեղուած, հաւատաւորութիւնը շատերի համար փրկութեան միակ խարիսխն էր թւում այս տխուր օրերին. իս-

*) «Cehil Sutan», p. 378.

**) *ibid.*, p. 365.

***) *ibid.*, p. 366.

լամի հետևողները ազատուում էին պիտանարկի ծանրութիւնից ու իմամ Ջաֆարի անունով յայտնի ժառանգական իրաւունքով նախատեսնուած արտօնութիւնը վայելում:

Սակայն քրիստոնեաների մահմետականացումը երբէք էլ ձեռնառու չի եղել իսլամի խելահաս քաղաքագէտներին: Շահ Աբբաս Ա. հրաման է արձակում ի նպաստ Նախիջևանի համայնքների, որով նա կարգադրում է «վերստին եկեղեցու գիրկը հրաւիրել նրանց, որոնք յետ կը կանգնեն կաթոլիկութիւնից (qui abjureront la foy catholique). իսկ եթէ նրանք կը կամենան յամառել իրանց սխալանքի վրայ՝ զրկել նրանց այն արտօնութիւնից, որ ունէին նրանք առաջ (երբ նրանք կրօնափոխ էին եղել)՝ խլելու և իւրացնելու այն բոլոր կայքը, որ կը գտնէին նրանք իրանց ընտանիքում*): Այս շահի օրօք կաթոլիկ համայնքների վիճակը սկսում է կրկին բարելաւուել: 1604-5 թուականի մեծ գաղթի ժամանակ կաթոլիկ հայերը, շահի հրամանով, տեղահան չեն արւում**), իսկ, Ն. Անտոնինուս Թանիի վարած բանակցութեան հետեանքով, յետագայում կաթոլիկ համայնքները «խառ» են արւում, այսինքն՝ համարւում «ենթակայ յատկապէս և անմիջապէս շահին, ազատ իւրաքանչիւր այլ մասնաւոր իշխանի իրաւասութիւնից»***): Շահը «արգելում է արտակարգ տուրքեր (tributs extraordinaires) վերցնել կաթոլիկներից, պատուիրելով հարկահաններին բաւականաճալ միմիայն նրանով, ինչ վերոյիշեալ կաթոլիկները սովոր էին վճարել մինչ այդ, առանց որ և է յաւելման, ինչ պատրուակով էլ չը կատարուի այդ»†):

*) P. Raphael du Mans «Estat de la Perse en 1660», publié par Ch. Schefer. Paris 1890. pp. 322—23. վերոյիշեալ հրամանը մեր աղբիւրի մէջ թիւրիմացաբար վերագրւում է շահ Աբբաս Բ.-ին:

**) Ք. Պատկանեան, ibid, p. 7. P. Fr. Antoine de Gouea «Relation des grandes guerres et victoires obtenues par le roi de Perse Cha-Abbas» etc. Rouen, 1646. p. 374.

***) «Cehil Sutun», p. 385. հմմ. մեր ձեռագրի p. 54. v.

†) P. Raphael du Maus, ibid.

և միայն այն դէպքում, երբ համայնքները թերանում են իրանց տուրքերը ժամանակին արքունիք հասցնել, կարգադրում է «մալուջահաթն» կրկնակի վերցնել (Ձեռագիր, p. 54. v.)

Շնորհիւ հայ կաթողիկ գիւղերի գլուխն անցած հայրերի ապիկարութեան և համայնքների մէջ առաջացող ներքին տարաձայնութիւնների, Նախիջևանի հայերը չկարողացան սակայն օգտագործել իրանց այդ արտօնութիւնները*): Տնտեսական այն ընդհանուր տագնապի շրջանում, որով պէտք է անցնէր Պարսկահայաստանը շահ Աբբաս Ա-ից յետոյ, ծանր պարտքերի մէջ խրուած հայ կաթողիկ համայնքները ևս շարունակում էին ենթարկուած լինել զրկանքների ու հարստահարութեան: Ուստի և, կամենալով վերստին ապահովել իրանց հին արտօնութիւնների գործադրութիւնը, նրանք պատուիրում են Հ. Մատթէոս Յովանիսեցուն Եւրոպայի կաթողիկ պետերից այդ իմաստով յանձնարարականներ ձեռք բերել Պարսկաստանի նոր գահակալ շահ Սուլէյմանի անունով: Այդ նպատակով, դեռ ևս իւր հաստատութիւնից առաջ, 1667 թուին, դիմում է Հ. Մատթէոս Փարիզ և ստանում Լիւդովիկոս ԺԴ-ից 23 նոյնիսի թուակիր մի նամակ ուղղած շահին: Շնորհակալութիւն յայտնելով Նախիջևանի գաւառում ապրող կաթողիկներին կառավարութեան ցոյց տուած հովանաւորութեան համար, Լիւդովիկոսը յոյս է յայտնում, որ նոր շահը ևս իւր «հօր» օրինակին—նամակի մէջ պատմական անունների և փաստերի շփոթութիւն կայ—կը հետևի, որը իրանից կամ իր տան անդամներից բացի, ոչ ոքի չէր կամենում նոյն իսկ վստահանալ Նախիջևանի գաւառի կառավարութիւնը**):

Ինչպէս տեղեկանում ենք թէ մեր ձեռագրից (p. 53 v. — p. 54 r.) և թէ այլ աղբիւրներից***), Հ. Մատթէոս

*) «Cehil Sutun», p. 385.

**) P. Raphael dn Mans, ibid.

***) Բ. Պատկանեան, ibid. p. 25. «Cehil Sutun» p. 439 և

պարսից շահի անունով իր հետ յանձնարարականներ է վերցնում նաև Կլեմենս IX պապից, Ֆլորենցիայի մեծ դքսից և Վենետիկի հասարակապետութիւնից^{*)}։ Այսպիսով դեսպանի ու պապական նուիրակի շնորհք ստանալով, Հ. Մատթէոս 1669 թուին վերադառնում է Նախիջևանի գաւառը, իսկ այստեղից, նոյն տարին անցնում է Սպահան՝ իր վրայ դրած յանձնարարութիւնները կատարելու։

Ձեռագրի մէջ Հ. Մատթէոս տալիս է իւր այդ առաքելութեան բաւականին մանրամասն նկարագիրը։ Սպահանում, ինչպէս երևում թէ այդտեղից և թէ կողմնակի աղբիւրներից, Հ. Մատթէոս լաւ ընդունելութիւն է գտնում. յարգելով եւրոպական հովանաւորների միջնորդութիւնը, շահ Սուլէյմանը վերականգնում է կաթոլիկ հայերի արտօնութիւնները և խոստանում է թեթեւցնել նրանց հարկերը^{**)}։ Եւ իրօք այս դեսպանութեան հետեանք է համարում Հ. Բեդիկ այն, որ «մի քանի տարուց ի վեր»—հեղինակը գրում է 1678 թուականին—Նախիջևանի գաւառը կրկին է «խաս» արուել, «որի շնորհիւ այս գաւառի հպատակները արտօնութիւն են վայելում՝ իրենցից ունենալու երկրի կառավարիչներ» (*ut ex suis habeant Principales in dominio directores*). համայնքներն են «իրարու մէջ բաժանում և հաւաքում տարեկան հարկերն ու թագաւորական տուրքերը» (*ipsique inter se tributa et jura Regis annua exigant atque congregant*) ու յանձնում կենդրոնական գանձարանին դրա համար նշանակուած օրը. ուշացնելու դէպքում հարկադրւում են «գինարին մի դինար տուգանք վճարել» (*incurrant pœnam Dinare du dinar*)^{***)}։

*) Այս յանձնարարականների բովանդակութիւնը մեզ ծանօթ չէ։ Գիտենք միայն, որ հասարակապետութեան ուղարկած գրութեան մէջ առաջարկ է եղել դաշնակցելու ընդհանուր թշնամու՝ Թիւրքիայի դէմ, «Cehil Sutun» *ibid*, նոյնպիսի առաջարկ արուած է եղել ըստ երևոյթին և Կլեմենս Թ.-ի նամակի մէջ, հմմ. Ալիշան, *ibid*, p. 399.

**) Ալիշան, *ibid*.

***) «Cehil Sutun». p. 432.

Իւր ձեռագիր յիշատակարանի երկրորդ մասում Հ. Մատթէոս հաղորդում է մեզ այն բոլոր հոգևոր հայրերի անունները, որոնք իր առաջնորդութեան ժամանակ ստատաւորում էին Նախիջևան գաւառի վանքերում ու եկեղեցիներում: Եթէ նրա այս տեղեկութիւններին կցելու լինենք այն բոլոր տուեալները, որ գտնում ենք ժամանակակից Հ. Պետրոս Բեգիկի աշխատութեան մէջ հայ կաթողիկէ եկեղեցական համայնքների նկատմամբ*), կարող կը լինենք բաւականին ստոյգ գաղափար կազմել 1670-ական թուականների Նախիջևան գաւառի մասին:

«Մեք նուաստս տ՝ն մաթէոս արհի եպսկօյս, ընտրլ ի վիճակս եպիսկոպոսաց ի քհնից և ժողովրդոց, ընկալաք շնորհք և պսուե՛ն ի մեծն հոմ, ի սէր եկղցոյն սանդա մարիամ մայջօր, ի ձեռնէ բարձրագոյն տ՝ն կարդինալիս պիլօնայ, և արհի եպսէն ջէնուայ քղքէն և սրբազան հօյրապո՛տին կլէմէնթոսի, թ՝, եր՝դի, առաք շնորհք դէսպանու՛ե, հնդրձ, գէ, կոնդակսով (sic!), հետք՝դւմ աղերսիւ նաև հրովարտաք ֆրանցիոյ թ՝գրին ի լվգի. նա և ուսպուլիկայ գրանդուկին, և յուդի անկե՛լ եկաք հասաք ի վիճակս մեր նախիջևան, թ՝վ ո՞ղթ յ՝ւլսի, ժ՝, մնացաք տեղս գէ ամիս և աստ ի չուե՛լ հասաք ի քղքէն թ՝րվէդ, և տեսաք զմանսուր խանի որդի թահմազ խանն, և ցոյց տուաք զաղերսս և զհրովարտաքս թագաւորացն քրս՝տոնէից, և ետ մեզ խանն ք՝ մհմանդար, աւուրս խ՝ հասաք իսպրհան, և եկն իսպրհան դէսպան առքլ ի կազմիր թ՝գրէն լէհացոց, որ անունն կոչի բուղդան բէկ, և ետուն բնակուի՛ մէջ քղքին իսպրհան, և եկն մէհմանդ՝ր պաշի, որ անունն կոչի ուսուփ բէկ, և ետուն մեզ բնակուի՞ սարահ մի, ի մէջ ջուղայոյ քղքին, որ կոչի սարահ խօճայ սիւլէյմանին, և տային մեզ օրըստօրէ ոօճիկ թ՝գրէն շ՛հ սիւլէյմանի որդի շահ ապաղէն, (sic! փոխանակ Շ՛հ ապաղի որդի շահ սիւլէյմանէն») օրն դէ, մառչիլ, մնացաք մինչև գէ ամիս վս իւրէնց տօնին, ռամազանին, և սոյն աւուրն ռամազանին հրաւիրեցին մեզ առ թ՝գրն և մտաք առ թ՝գրն հետ դէսպան բուղդան բէկին, թ՝գրին լէհացոց, որ էր թիւն ո՞ղթ. փտըվ՝րի, ժ՝ր և մեծ՛ւ պատուով ընկալաւ զմեզ թ՝գրն, և տուաք զնա մենին և զախերսն, որ առաքե՛լ էր սրբ՝զն փափէն, և տեսաք անհամար զբղճք, ոսկէ քարէ ականէ և պատուկէնէ որոյ էր անթիւ և անասելի, և յետ

*) ibid, p. 380 և շար.

ա՞նձի մարտի ժ՛ա որ էր ա՞ւրն իւր՞նց նաւաւորին, հրաւի-
ր՞ցին խաւախու՞ին, սոյն օրս եղև մաժլիս և խաւախու՞ի ի ալա-
ղափումն, տեսաք զմաժլիշն և զմեծու՞ին, որ աւելի էր քան
զա՞նջինն տառնապատիկ, և մնացաք մինչև չոր՞դ սահաթն, հետ
թ՞գրին. և յետ սորա, է՞, եր՞դ օրն հրաւիրե՞ց, զիս թ՞գրին մեծ
վազիրն, որէ շխալի խանն: և ա՞մ զոր ինչ հրամայ՞էր մի ըստ
միտջէ ծանուցաք և արդ տուաք թ՞գրին վ՞ս ֆոսնկի գեղորէից,
նախ գիւղաք՞ղքին արարաներոյ, երկ՞դ գիւղն ճահկայ, և՞րդ
գիւղն շահ բունոյ, չոր՞դ գիւղն արբակունոյ, և՞, եր՞դ խօշկա-
շինոյ, զ՞, եր՞դ գիւղն սալի թաղոյ, է՞, եր՞դ գիւղն քոնայ, ը՞,
եր՞դ գիւղն զարաղուշ, որ պատրի անդոնինոս թանի վրդ՞պտ,
ֆուէրէնթինոյ. յառաջմէ խառ էր արարեր խազնին, շահապաղ
թ՞գրն ժ՞մկոյն, խնդրուածով ֆրանցիոյ թ՞գրին և ինքերաթօր
կայսերին, ռաղամ որ տուեր էր վ՞ս գեղորէից, թէ ը՞ստ ժ՞մկին
բերենք ոչ մալուջահաթն կլկնապատիկ լիցի, յետ սորա լաւ կա-
ռաւարում չեն գիտացեր որ խասն դա թարումն զաւթ չեն արեր,
բարաթ էին արարեր գեղորէից վերայ ո՞ղճկ՞ե, թուման, վս այս
ծանրութեա արդ տուաք թ՞գրին, թէ ժ՞ղվրդն կուցրուէ, կ՞բող
չեն վճարել, և թ՞գրն անցաւ այս զրամիցս, բաշխէց վ՞ս պատուոյ
փափին կլէմէնդոս, թ՞, եր՞գի: երկ՞դ արդ տուաք թգրին, վ՞ս
եկ՞ղցե՞ց. և ռաղամ ետուր մեզ թէ ուր կամիցեն շինել եկ՞ղցիս
ոչ ոք մեծամեծ կարող չեն խօսել, ըստ կամաց թ՞գրին ք՞րստո-
նէից, նա և ռաղամ ետ գեղորէից, ոչ ոք իշխանք կարենան ոչ
համարձակ ձեռն արկել ի վ՞ր գեղորէից, բայց միայն ինքն թ՞գրն
. . . ցէ դատաստան և այլ իրաւունս, թ՞վ փրկչին ո՞ո՞հ՞-
մ՞րտի, ժ՞ա, ապր՞լի, ի՞, խալաթ եկաւ մեզ, ի թ՞գրէն . . . ցաք
խալաթն գնացաք մօտ թաղ՞րին, իւ՞րնց զաւրան բայրամին,
մեծ ուրախու՞ի արարին, և յանձնեցին մեզ նամէքն պատասխան
թաղաւորացն, զ՞, նամայ, և լ՞ թուման ինտմ մեզի, և ի՞նչ, թ՞մն
մեր խարճն, և պատուէր ետ թ՞գրն, ը՞, հաւատարիմ ք՞հ ի կար-
գէն ս՞ք դօմինիկոսի, զի տարցեն զնամէքն առ թ՞գրն քր՞ստոնէից,
և ռաղամ ա՞րր ի վ՞ր շամախի խանին, որ ս՞ոք առ՞քսցէ ի վ՞ր
մա(ս)կովայ, որք են անուանք կրդ՞ւրացն, մերոց, տ՞ր ազարէն
ի գիւղէն ճահկայ, և տ՞ր անդոն ի գիւղէն արբակունոյ, և ֆ՞ր
գրիգոր ի գիւղէն շահբունոց, թ՞վ, ո՞ո՞հ՞ յուն՞սի, ի՞դ, դուքս
եղանք ըսպհանայ, որ էր ը՞մեզ, ը՞, ք՞հ, տ՞ր բէնէթ արա-
րանէրոյ և տ՞ր անտոն արբակունաց, թ՞վ ո՞ո՞հ՞, յ՞ւլ՞սի, ի՞դ,
մտաք ի վիճակս մեր նախիջեան, և աթոռանիստ գիւղաք՞ղքն ա-
րարանէր. թ՞վ, ո՞ո՞հ՞, օգոստոսի, ժ՞, տ՞ր ազարէն և տ՞ր ան-
դոնն զճ՞պրհ եղաք, զէպ շամամախի:
թ՞վ ո՞ո՞հ՞ թ, երբ հասաք ի վիճակս մեր, ի թիւ արկաք

կ'րգւրք ս'ր դօմինիկոսի, ն'խ ի վանս արարաներոյ, տ'ր պ'տրոս պրեդիկաթօր ջէնարալ, տ'ր ք'րթողիմէոս որդի անլիմանի, տ'ր բէնէթ, բէկի որդի որ այժմ սինդիք, տ'ր միքայէլ լէքթօր որդի աւանիսի, որ է վարժե'լ ա'ծար'նու'ե, ի ք'ղքն նապօլի, տ'ր քարդօղիմէոս լէքթօր, ջլմանի որդի, որ է վարժե'լ ա'ծարանու'ե, ի քաղա(ք)ն նապօլի, տ'ր դուկաս լէքդօր, էվատի որդի, որ է վարժե'լ ա'ծարանու'ե ի ք'ղքն նապօլի, և այժմ է ի ք'ղքն հ'ոմ, չինսինարիօ հայոց, տ'ր թումայ դադումեցի, վարժե'լ ի ք'ղքն բէնէվէնդ, որ այժմ է իսպանիայ երկիրն, տ'ր աւգուստին րաճեցի, նորընծայ. ի թոռն ագուստոնոս արք եպիսկոպոսին, տ'ր պ'ղոս որդի սաւարչի, որ այժմ է ի վարժարան ա'ծար'նու'ե ի ք'ղքն ֆուէրէնցայ, յերկիրն գրանադուկին, որ է եղբօր որդի մաթէոս արք ե'պսին, կօնֆէրքն, ֆ'ր խաչատուր որդի միթարին, ֆ'ր գրիգոր որդի ամիրջանի, նորամուտքն որ են ի վանս արարաներոյ, ֆ'ր յակոր սալթաղցի, ֆ'ր գրիգոր արքագունեցի, ֆ'ր ովանես արարան'րոյ, ֆ'ր մաթոս արարաներոյ:

Ի վանս քոնայ, ֆ'ր դօմինիկոս, ոօգարի, պրեդիկաթօր ջէնարալ ի գիւղէն խօշկաշինոյ, որ այժմ է վիք'ր կ'րգի գաւառիս, ֆ'ր դօմինիկ'ս:

Ի վանս խօշկաշինոյ, ն'խ տ'ր թումայ լէքդօր, վարժեալ ի համալսարն (sic!) ա'ծար'նու'ե, ի ք'ղքն նապօլի, որ այժմ է միւսինար առքիլն առ'քլ ի ալիօրնայ ի քղ'քէն խօշկաշինոյ:

Ֆ'ր դօմինիկոս պրեդէկաթօր ջէնարալ ի գ'ւղն գանձակոյ, ֆ'ր պօղոս խօշկաշինոյ կօնթէրքն. ֆ'ր գրիգոր խօշկաշինոյ, ֆ'ր անդրէաս խօշկ'շնյ:

Ի վանս արքակունաց, նախ ֆ'ր միքայէլ պրեդիկաթօր ջէնարալ, արքի'ւնց, ֆ'ր անդոն արքի'ւնց. որ այժմ է ի պարսից թ'գրն դեսպան ա'ռքլ առ թագ'ւրէրն քր'ատոնէից, նորընծայ, ֆ'ր թաթէոս ապրի'ւնց, նորընծայ, ֆ'ր պ'տրոս ապ'րիւնց որ այժմ է ի յուսուէն ֆօուրէնցայ:

Ի վանս ճահուկ, ն'խ ֆ'ր ագարիայ ճահկոյ, պրեդիկաթօր ջէնարալ, որ այժմ է դեսպան առաքե'լ պարսից թ'գրէն ի միասին, հետ ֆ'ր անդոնին արքիւն'ց առ թգ'րն քր'ատոնէից, ֆ'ր պօղոս ճահկոյ, յազգէն դումրենց, ֆ'ր թումայ ճահկոյ նորընծայ, ֆ'ր աթանաղիոս ճ'հ նորընծայ ի վանս բու(նայ) ֆ'ր ըստէֆան սպասա(ւոր) վանից շահրունայ նորընծայ, ֆ'ր մանուել շ'հր'ւնցի նորընծայ, ֆ'ր գրիգոր ք'հնյ որ այժմ է գնաց'լ հետ ֆ'ր ագարին ճահկոյ առ ի վարժե'լ ա'ծարանու'ի:


Ի վանս զարադուշոյ, ֆ'ր յակոր անդրիասի որդի զարադուշոյ, ֆ'ր դուկաս նովիցի զարադուշոյ:

Ի վանս կէծկոյ, ն'խ ֆ'ր գրիգոր ա'ծար'նու'ե վր'դպտ

վարժեալ ի համալսարան (sic!) ս՛ր թօմի ի մեծն հ՛ումյ, որ այժմ է մեծն ի հ՛ում, ֆ՛ր բաղդասար նոյն գեղջէն կէծկոյ, նորընձայ, որ այժմէ ի միասին գրիգոր վր՛դաին, ֆ՛ր անդ՛րս նոյն գեղջէն:

Արդ անուանք վրդ՛պոց ք՛հից և կ՛րգւորաց, թ՛վ մրգ՛ղու՛ե տ՛ն, ո՛ո՛հ՛գ, յ՛ւնվրի ժ՛դ ի ժ՛մկս ծայրագոյն և սրբ՛դն հայր՛պաի տ՛ն կլէմէնդոս, ժ՛, ե՛րդի, և ի ընդհանրկն ջէնարալ կ՛րդին ս՛ր դօմինկ՛սի, տ՛ն թօմաս րեկօբեռթի, և վիճակիս ն՛խիջևանոյ, արհիե՛պս տ՛ն մաթէոս յովանիս՛ցի, ի գիւղաք՛ղքէն ար՛ընէրոյ, այսուհետև պատուիրեմ ա՛մ կր՛գւրց, որ գան ի կրգի ս՛ր դօմինկ՛սի, շարդ՛րացեն ի պ՛տմագրումս ե՛կլքն առ ք՛ս, այսքան բաւեսցի:

Ա. Յովհաննիսեան.



ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ

Հայերէն ձեռագրերը

(Համառօտ նկարագրութիւն և յիշատակարաններ)

Շարունակութիւն *)

417ա. Փառք և աւրհնութ՛ի գովութիւն բարէբանութ՛ի երկրպագութ՛ի և փառաբանութ՛ի և մեծ գոհութ՛ի ի բոլոր սրտէ և ի բաւանդակ մտաց և յանձնէ և յամենայն զաւրութեանէ մերմէ ս՛ր երրորդութեանն հաւր և որդոյ և ամենազաւր ս՛ր հոգւոյն այժմ և միշտ և յաւ՛. Ք՛ի Յ՛ի մարդեղութե՛ն խաչելութե՛ն և ս՛ր յարութե՛ն փառք և աւրհնութի՛ յամենայն արարածոց և յամենայն ազգաց ազանց և ի ս՛ր լիզուաց առկտակարաց թարգմանչաց յերկնաւորաց և յերկրաւորաց, յիմանալեաց և ի սգալեաց, ի զաւրաց հրեշտակաց և ի սրբոց ճգնաւորաց և յամենայն ս՛ր եկեղեցեաց աւրհնեալ և փառաւորեալ խաչելեալ տ՛րդ: Աւրհնեալ միածին որդիտ: Աւրհնեալ բարձրեալ հաւր որդիտ: Աւրհնեալ բարերար տ՛րդ: Աւրհնեալ բարէգութ տ՛րդ: Աւրհնեալ երկայնամիտ տ՛րդ: Աւրհնեալ կատարիչ խնդրուածոց տ՛րդ: Աւրհնեալ անբաւ մարդասիրութիւնդ տ՛ր թագաւոր: Աւրհնեալ շնորհատու բարեաց տ՛ր թագաւոր: Աւրհնեալ ա՛ծային ծնունդտ որդի ա՛յ կենդանոյ: Աւրհնեալ ա՛ծային

*) Տես «Արարատ» 1944, դեկտ.: